

ՔՍԻԼԱԶԻՆԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՎԱՐՉԱՇՐՋԱՆՈՒՄ

Հիմնական տեղեկագրություն

- Քսիլազինը հանգստացնող դեղամիջոց է, որն օգտագործվում է անասնաբույժների կողմից կենդանիների ցավագրկման համար, որն ավելի ու ավելի է հանդիպում թմրանյութերի ապօրինի մատակարարման մեջ:
- Քսիլազինը կարող է հայտնաբերվել փողոցային թմրամիջոցներում, անօրինական դեղամիջոցներում և կեղծ դեղահաբերում՝ հաճախ առանց այդ նյութերն օգտագործող մարդկանց իմացության:
- Եթե մարդն ընդունի քսիլազինը, ապա այն կարող է իջեցնել արյան ճնշումը, թուլացնել սրտի ռիթմը և շնչառության ընթացքը:
- Երբ զուգակցվում է ափիոնների հետ՝ ֆենտանիլի նման, ինչպես հաճախ է պատահում, քսիլազինն ուժեղացնում է ափիոնային թմրամիջոցների կողմից առաջացած շնչառական դեպրեսիայի (շնչառության դանդաղեցում կամ դադարեցում) կյանքին սպառնացող ազդեցությունը՝ մեծացնելով գերդոզավորման և մահվան վտանգը:
- Չկա դեղամիջոց կամ հակաթույն, որը կարող է հակադարձել քսիլազինի գերդոզավորմանը: Նախքան արդյունավետ է ցանկացած ափիոնի դեմ, որ նպաստում են գերդոզավորմանը, բայցարդյունավետ չէ քսիլազինի դեմ:
- Մարդիկ պետք է նախքան ներարկեն գերդոզավորման ժամանակ՝ գերդոզավորման հետ կապված ցանկացած ափիոն արգելափակելու համար, նույնիսկ եթե այդ գերդոզավորումը կարող է կապված լինել քսիլազինի հետ և զանգահարել 911՝ համոզվելու համար, որ գերդոզավորված անձը շտապ բժշկական օգնություն է ստացել:
- Գոյություն ունի հեշտ հասանելի թեստ, որը մարդիկ կարող են օգտագործել քսիլազինը հայտնաբերելու համար, չնայած, որ այն ցույց չի տալիս նմուշում առկա քսիլազինի քանակը, մաքրությունը կամ ակտիվությունը:

Ամփոփում

Լոս Անջելես վարչաշրջանում թմրանյութերի ապօրինի մատակարարումներն ավելի ու ավելի են մեծացրել գերդոզավորման վտանգ ներառող նյութերը: Ներկայումս քսիլազինը, բացի ֆենտանիլից, ավելացվում է փողոցային թմրամիջոցներում, անօրինական դեղամիջոցներում և կեղծ դեղահաբերում: Քսիլազինը էժան հավելում է, որը մեծացնում է ակտիվությունը, ինչպես նաև գերդոզավորման և մահվան վտանգը: Դեղերի մատակարարման այս նոր վտանգավոր խառնուրդներն ընդգծում են համայնքում ավելի լայն շարունակական կրթության և իրազեկման բարձրացման անհրաժեշտությունը:

ARMENIAN

ՔՍԻԼԱԶԻՆԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՎԱՐՉԱՇՐՋԱՆՈՒՄ

Ի՞նչ է քսիլազինը:

Քսիլազինը, որը նաև հայտնի է որպես «հանգստացնող», «հանգստացնող դեղամիջոց» կամ «զոմբի դեղամիջոց», հանգստացնող և մկանային հանգստացնող միջոց է, որը գալիս է թափանցիկ հեղուկի տեսքով և օգտագործվում է անասնաբուժության մեջ՝ վիրահատության ժամանակ կենդանիների քնեցնելու համար: Ներկայումս այս նյութը դաշնային վերահսկողության տակ չէ և հաստատված չէ ԱՄՆ Սննդի և դեղերի վարչության (FDA) կողմից մարդու օգտագործման համար:

Ինչպե՞ս է դա ազդում:

Մարդկանց մոտ քսիլազինը նվազեցնում է ցավը և դանդաղեցնում ուղեղի գործունեությունը՝ առաջացնելով շնչառության մակարդակի նվազում, դանդաղեցնում է սրտի բաբախյունը և իջեցնում արյան ճնշումը՝ հանգստացնող ազդեցություն և քնկոտություն առաջացնելու համար: Կլինիկայում այն կիրառվում է անասնաբուժական վիրահատությունների ժամանակ կենդանիների քնեցնելու համար: Այն հատուկ նախատեսված է կենդանիների վիրահատությունների համար և համարվել է չափազանց վտանգավոր մարդկանց օգտագործման համար:

Ինչո՞ւ է այն այդքան վտանգավոր մարդկանց համար:

Քսիլազինը FDA-ի կողմից հաստատված չէ մարդու կողմից օգտագործման համար, քանի որ այն առաջացնում է վտանգավոր ցածր արյան ճնշում, դանդաղեցնում է շնչառությունը և սրտի բաբախումն, ինչը կարող է հանգեցնել մահվան: Քսիլազինի ներարկումը կարող է նաև հանգեցնել ներարկման վայրի շուրջ հյուսվածքների վնասման, ինչը հանգեցնում է մաշկի վնասման, մեծ խոցերի, որոնք կարող են վերածվել բարդ վարակների: Այդ իսկ պատճառով քսիլազինը ստացել է «զոմբի թմրանյութ» մականունը:

Ինչպե՞ս են թմրանյութեր օգտագործող մարդիկ վերաբերվում քսիլազինին:

Չեղուկ քսիլազինը ջրազրկվում և վերածվում է փոշու, ապա խառնվում է այլ նյութերի հետ, ինչպիսիք են՝ հերոինը, կամ խառնվում է կեղծ դեղահաբերի հետ (կեղծ հաբեր, որոնք նման են դեղատոմսով դեղերի), ներառյալ ափիոնները (օրինակ՝ Նորկո, Պերկոցետ, Վիկոդին և այլն), հանգստացնող միջոցները (Քսանակս) կամ նույնիսկ խթանիչները (Ադդերալլ): Այն մարդիկ, ովքեր ընդունում են նման թմրանյութեր, կարող են տեղյակ չլինել, որ քսիլազինն առկա է իրենց ընդունածի մեջ, ինչը կարող է մեծացնել մահացու գերդոզավորման վտանգը: Այսպիսով, քսիլազինը կարելի է կուլ տալ, ներշնչել, ծխել, հոտոտել կամ ներարկել մկանների կամ երակների մեջ: Երբ խառնվում է ափիոնների և կենտրոնական նյարդային համակարգի վրա ազդող այլ դեպրեսանտների հետ, ինչպիսիք են՝ ալկոհոլը կամ բենզոդիազեպինները, քսիլազինն ուժեղացնում և երկարացնում է դրանց ազդեցությունը, ներառյալ՝ հանգստացնող ազդեցությունը (քնկոտություն, որը հանգեցնում է անտարբերության) և շնչառական դեպրեսիան (շնչառության նվազում կամ դադարեցում): Քսիլազինը զգալի մեծացնում է մահացու գերդոզավորման վտանգը:

ՔՍԻԼԱԶԻՆԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՎԱՐՉԱՇՐՋԱՆՈՒՄ

Ինչու՞ է այն խառնվում թմրամիջոցների հետ:

Քսիլազինը էժան «լցանյութ» է՝ արգելված ափիոնների և այլ կեղծ հաբերի համար, քանի որ այն բարձրացնում է տարբեր ափիոնների ակտիվությունը: Քսիլազինի այդ ազդեցությունը դեղեր պատրաստողներին ու տարածողներին թույլ է տալիս ունենալ շատ ուժեղ արտադրանք: Այնուամենայնիվ, մարդկանց մեծ մասը, ովքեր ձեռք են բերում անօրինական թմրանյութեր կամ ում տալիս են դրանք, չեն ցանկանում ընդունել քսիլազին և, հավանաբար, տեղյակ չեն, որ քսիլազինը կարող է ներառվել այն թմրանյութերի մեջ, որոնք նրանք փորձում են ձեռք բերել:

Որո՞նք են քսիլազինի գերդոզավորման ախտանիշները:

Քսիլազինի գերդոզավորումը պետք է կասկածվի այն մարդկանց մոտ, ովքեր ունեն ափիոնների գերդոզավորման ախտանիշներ, ներառյալ՝ բիբերի նեղացումը, շնչառության դանդաղեցումը կամ դադարեցումը, դանդաղ կամ ընդհանրապես դադարեցված սրտի բաբախյունը, սառը /կապույտ կամ կապտավուն/մանուշակագույն մաշկը, որոնք չեն արձագանքում նալոքսոնին:

Կարո՞ղ ենք թեստավորվել:

Թմրամիջոցների արագ թեստավորման փայտիկները, որոնք թույլ են տալիս բացահայտել քսիլազինը թմրամիջոցի առկայությունը, վերջերս առցանց հասանելի են դարձել BTNX-ի միջոցով (<https://www.btnx.com/HarmReduction>): Այնուամենայնիվ, այս արագ թեստերը ցույց չեն տալիս նմուշում հայտնաբերված քսիլազինի քանակը, մաքրությունը կամ ակտիվությունը:

Քսիլազինը կարող է հայտնաբերվել քանակական սպեկտրոսկոպիկ թունաբանական վերլուծության միջոցով, ինչպիսին է գազի քրոմատոգրաֆիան-զանգվածային սպեկտրոմետրիան: Այնուամենայնիվ, շտապ օգնության սենյակում առկա դեղերի արագ թեստերը թույլ չեն տալիս ո՛չ կանոնավոր կերպով ստուգել քսիլազինի առկայությունը, ո՛չ էլ հայտնաբերում են այն:

Լոս Անջելես վարչաշրջանի բնակիչները կարող են նաև դիտարկել իրենց դեղերը որպես փորձնական ծրագրի մի մաս փորձարկելու տարբերակը, որն իրականացվում է Կալիֆորնիայի Լոս Անջելեսի համալսարանի (UCLA) միջոցով, այն իրականացվում է Ֆուրիեի փոխակերպման ինֆրակարմիր սպեկտրոսկոպիայի (FTIR) սարքերով՝ դեղերի նմուշները մոտ 15-20 րոպեում հետազոտության ենթարկելու համար, և հասանելի է անվճար՝ կապ հաստատելով Chelsea L. Shover, PhD հետ՝ clshover@mednet.ucla.edu էլ.փոստի միջոցով:

Արդյո՞ք կա քսիլազինի գերդոզավորման հակաթույն:

Մարդկանց մոտ քսիլազինի գերդոզավորման դեպքերի համար հաստատված հակաթույն գոյություն չունի: Այնուամենայնիվ, քանի որ քսիլազինը սովորաբար զուգորդվում և օգտագործվում է ափիոնների հետ, նալոքսոնը կարող է օգնել ժամանակավորապես

ARMENIAN

ՔՍԻԼԱԶԻՆԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՎԱՐՉԱՇՐՋԱՆՈՒՄ

հակադարձել քսիլազինի հետ միասին ընդունված ցանկացած ափիոնների ազդեցությանը: Ուստի կարևոր է, որ ցանկացած անձ, ով կասկածվում է գերդոզավորման մեջ, զանգահարի 911 և արագ նալոքսոն ներարկվի, եթե նրա մոտ առաջանում են քսիլազինի կամ ափիոնների գերդոզավորման ախտանիշներ: Դա կարող է փրկել նրանց կյանքը:

Քսիլազինը հայտնաբերվել է թմրանյութերի նմուշներում՝ 36 նահանգներում և Կոլումբիայի շրջանում: Նյու Յորքում քսիլազինը հայտնաբերվել է թմրանյութերի նմուշների 25%-ում: Ֆիլադելֆիայում քսիլազինն առկա էր 2021 թվականին թեստավորում անցած ֆենտանիլի և հերոինի նմուշների ավելի քան 90%-ում: Իսկ Կալիֆորնիայում քսիլազինը թմրանյութերի նմուշներում հայտնաբերվել է 2023 թվականին՝ Լոս Անջելեսում, Սան Ֆրանցիսկոյում և Սան Դիեգոյում:

Ինչպե՞ս է դա ազդում թմրանյութերի օգտագործման վրա:

Եթե դուք կամ ինչ-որ մեկն, ում ճանաչում եք, պատրաստվում եք ապօրինի թմրանյութեր օգտագործել, հիշեք հետևյալը.

- 1) Մի օգտագործեք երբ մենակ եք: Օգտագործեք ընկերոջ կամ մեկի հետ միասին, ով կարող է զանգահարել 911 և նալոքսոն ներարկել գերդոզավորման դեպքում:
- 2) Սկսեք փոքր դոզայով և դանդաղ բարձրացրեք այն. քսիլազինը կարող է մի քանի ժամ մնալ ձեր օրգանիզմում և կուտակվել:
- 3) Եթե ինչ-որ մեկը գերդոզավորվել է, ամեն դեպքում օգտագործեք նալոքսոն: Քսիլազինը հաճախ խառնվում է ափիոնի հետ, և նալոքսոնը կարող է օգնել՝ հակադարձել ափիոնի ազդեցությամբ գերդոզավորման վրա:
- 4) Ինչպես քսիլազինը ներարկման միջոցով թմրանյութեր օգտագործող մարդկանց մոտ, այնպես էլ նրանց մոտ, ովքեր չեն ներարկում դրանք, կարող են մեծանալ մարմնի տարբեր մասերում վերքերի առաջացման վտանգը, նույնիսկ այն տեղերում, որտեղ ներարկումներ չեն արվել, այնպես որ խնդրում ենք հետևել ձեր մաշկին:

SUBSTANCE ABUSE SERVICE HELPLINE



1.844.804.7500

ARMENIAN